

Բ Ա Ջ Մ Ա Վ Է Պ

Հ Ա Ն Դ Ի Ս Ա Ր Ա Ն



Հ Ի Ն Ն Ե Ի Ն Ո Ր

Սարմանալի է մարդուս սէրն առ նորութիւն, մինչդեռ մահաւանդ մեծապէս սիրող է և հնութեան. երկու դէմ ընդդէմ զգացմունք և կէտք, այլ մին միւսոյն բոլորիչ և բովանդակիչ, եթէ մտածենք զհինն և զնոր իբրև անցեալ և ներկայ՝ որովք կը հիւսի մարդկային կենաց պատմութիւնը, և կ'արդարանայ մեր բնական բերումն առ երկոսին միանգամայն:

Այս հնասիրութեան եռանդը նորասիրութեան հետ խառնեալ, կրկին՝ մարդկային անցաւոր և անանց յաւիտենականութեան գաղափարները՝ մէկ մէկու հետ կը լծորդէ, և ստոյգ անմահութեան առհաւատչեայ ճաշակ կ'ըլլայ: Մարդս խորամուխ ըլլալով՝ ի գաղտնիս և ի ծածուկս անցելոց՝ կարծես խորամուխ կ'ուզէ ըլլալ և ի խորհրդաւոր լռութիւն և թաքնութիւն ապագային. զնորն ըստ հնոյն կերպ կերպ յերիւրելով, ըսել կ'ուզենք՝ զնորաձեն և զնորակերպ սիրելով, այլ ոչ ըստ բոլորին զարտուղելով՝ ի հիմանց հնոյն, որք ըստ ճշգրտիժ օրինաց բնութեան են և ըստ ոճոյ չափակցութեան գեղե.

ցիկ, կ'ուզէ իբրև անձամբ անձին իր ապագայն յօրինել: Կը յարգէ կը սիրէ զհինն՝ այլ զնորը մերձաւորապէս անձին կը պատշաճեցնէ, և գրեթէ միշտ զերկրորդն՝ առաջնոյն կատարելութիւնը կ'ուզէ համարիլ, և անյազ բերմամբ յամենայնի՝ ի խնդիր լաւագունին կը թեակոխէ. և առ այս՝ ջանքն և հնարագիտութիւն անդադար փոփոխելոյ տեղի, բնակութիւն, զգեստ, գործ, ընկերութիւն, և երբեմն՝ որ ցաւալին է՝ բարեկամութիւն և քաղաքական կենաց վարչութիւն:

Այսպէս ի մարդն վառ է միշտ սէր նորութեան, այլ և իբրև ի հարկէ իմեքէ բերեալ է ի սիրել զհնութիւն, որով շատ անգամ և զհինն իբրև նոր համարի: Երբ հակամէտ ի ձանձրութիւն՝ փոփոխութիւն ուզէ, ի սթափումն անձին ճանապարհորդէ, նորանոր հանդէսներ և անդադար նորութիւն փնտրուէ և նոր կեանք հանգստասէր, յաճախ նոր կեանք մտաւորական է փնտրուածը, առանց թերևս իւր իսկ գիտելոյ. և զհինն որ զգայ, տեղեկանայ, ըմբռնէ, նոր համարի և զուարճալի, մինչդեռ չիք ինչ նոր ընդ արեգակամբ,

այլ վերբերական ամենայն նորութիւն :
 Ըստ այսմ մեծ հետաքրքրութեան և գո-
 հութեան նիւթ է մարդուս՝ և մանա-
 ւանդ կիրթ անձի մը համար, նորանոր
 ծանօթութիւններ ստանալ ներկայ և
 անցեալ դարուց վրայ, և զհինն և զնոր
 մէկմէկու հետ կշռադատել. և առ այս
 ահաւասիկ մեծապէս նպաստամատոյց
 է պատմութիւն՝ վաւերացեալն բիւր
 հետազօտութեամբք ստոյգ ուսումն և
 հմտութիւն սիրող գրագիտաց. և առ
 պատմութիւն զիւրիչ և յորդորիչ պար-
 բերական ուսումնական հրատարակու-
 թիւնք, ինչպէս որ կան բիւրաւորք յե-
 րոպէ, որք քաղեն ամենայն հմուտ ճա-
 նապարհորդաց և բանասիրաց տուած
 ծանօթութիւնքը. այնմ՝ որ՝ի հիւսիսաւ
 յին բեւեռն թափառի՝ անցեալ և ժա-
 մանակակից մարդկութեան հետքն ու
 երկիրները հետաքննելով, և այնմ որ
 Ափրիկոյ հասարակային կիզիչ գօտեաց
 ներքև նիւսի ջուրց աղբերակունքը, և
 կողմանց ու բնակչաց կերպարանագրու-
 թիւնքն ու անհարթութիւնքը կ'ուսա-
 նի. և բիւրաւոր այլոց, որ բոլոր մարդ-
 կութեան գործն՝ արուեստն ու զարգա-
 ցումը, խորհուրդն, ոգին ու կիրքը, և
 յԱրարչէն հաստատեալ օրինաց բնու-
 թեան գաղտնիքը՝ լուծեն և ՚ի պէտս
 մարդկութեան հաղորդեն : Ըստ այսմ
 զարմանալի են և մեծապէս դրուատելի
 նոր անձկանօք ՚ի խորս գաղտնեաց ան-
 ցեալ դարուց հետամուտ եղող քննա-
 գէտք՝ որ անոնց կրթութեան ու գիտու-
 թեանը վերահասու ըլլալով, և ոգւոց,
 բարուց ու բնութեանց ազգաց ճիշդ
 տեղեակ՝ ծանուցանեն թէ յինչ հաս-
 տատեալ է մարդկութիւն, ազգութիւն
 և ընկերութիւն, և ինչպէս ըստ կարե-
 լւոյն երջանիկ կրնայ ըլլալ ու բարգա-

ւաճիլ : Ըստ այսմ առաջնոց մեծապէս
 օգնական՝ թերևս մասամբ իւրք աւելի
 գովելի և զարմանալի՝ աւերակաց մէջ
 դեգերող հնախոյզն որ վաղեմի դա-
 րուց յիշատակներն արթնցընելով հա-
 տակոտոր նշխարօք շինից և կահուց,
 կ'ուսանի ճշդիւ զարուեստ և զճարտա-
 րութիւն նախնի սերնդոց, և կ'աւանդէ
 այլոց՝ որք իրենց նոր հանճարովը խառ-
 նելով զհնոյն զընտիրն և զգեղեցիկ՝
 յառաջ բերեն պէսպէս հրաշալիք մտաց
 և ձեռաց : Ոչ ապաքէն ըստ այսմ և
 նախնեաց ոչ միայն վեհանձն կիրքն և
 առաքինական զգացմանց մեծամեծ ար-
 զիւնք, այլ և իմաստուն օրէնք՝ յորդո-
 րեն զմեզ և ապահով առաջնորդեն ՚ի
 բարձրագոյնս և ՚ի գովելիս՝ ՚ի գիւր և ՚ի
 պարծանս կենաց : Միչտ, ևս առաւել
 հիմա խոստովանի մարդկութիւն թէ
 նեցուկ իւր վարչութեանն ու խաղա-
 ղութեանը՝ յետ քրիստոնէական կրօնից
 սրբազան սկզբանց, են հին աշխարհ-
 քի՝ Յունաց և Հռովմայեցւոց և այլոց
 մեծապանծ ազգաց կարգքն և ընկերա-
 կան օրինադրութիւնք, ուղղիչ և ղեակ
 յամենայնի և ստոյգ բարգաւաճանաց
 պատճառ. որով խորունկ ուսմանց նիւթ
 ՚ի Գերմանիա՝ իմաստասիրաց ընտրելի
 վարդապետութիւնք և յուստիանեան
 օրինագիրք. և նոր ժամանակաց գրեթէ
 հանուր ընդունելի օրինաց մատեանն
 Նաբոլէոնեան՝ իրեն մեծ հաստատու-
 թիւն ունի և առաջնորդ զհռովմէա-
 կանն :

Այսչափ բարոյական և մտաւորա-
 կան կեանք մարդկութեան ընդ նիւ-
 թականին՝ ՚ի մի զանգեալ են և ձու-
 լեալ իւր նախահարց կենացն հետ,
 կէս մը անոնց գաղափարացն ու խոր-
 հըրդոց հետ մերը խառնած, հոգւոյ և

մտաց ազնիւ ձկտմանցն ու գիւտիցն հետ մերը զուգելով կ'ապրինք, և ոչ որ ժամանակիս մարդն համարուի գովեստիւք՝ եթէ նորոյս պատճառ հնոյն ալ գոնեա հարևանցի թափանցող չըլլայ. մինչև մեծատունն իսկ չհամարի իրօք մեծ՝ եթէ փոքր 'ի շատէ արդի և օրական իսկ կարևոր խնդրոց և գիտելեաց տեղեակ չըլլայ, և իրեն գահլըճացը զարդ չհամարի զանազան ընտիր օրագիրք և լրագիրք և նկարազարդ ուղևորութիւնք և հնաւանդ գրութիւնք, և ինքնին չմեծարէ պատկառելի լուծեամբ քաջահնչող նախնեաց մանրամասն յիշատակքն և ձեռակերտք, զանգրիս, զկամարս, զքանդակս, զանօթս և զգրամս՝ յորս տպաւորեալ է անոնց ոգին և բարուց տիպարն, հանդիսացընելով զայնս պալատան որմոցը վրայ, և կամ փակելով շքեղաշուք դարանաց և ամուր բանալեաց ներքև:

Եւ միթէ այս յիշատակաց առաւելութեանցն հետ կապուած չե՞ն և նոր հոյակապ քաղաքաց պարծանք և համբաւ. միթէ Հոովմայ, Լոնտրայի, Բարիզու, Դուրինի, Տրեզտի թանգարաններն և հմտութեանց հանդիսարանքը չե՞ն ուսումնապէս և ստուգապէս մեծայարգ ընողն այս քաղաքաց անուանքը՝ յորս հաւաքեալ են նախնեաց և նոր հանճարեղաց զարմանալիք, ուր ամենայն այցելուաց միտքն և սիրտք կրթուին յընտիր ճաշակ և երևակայութիւն, և ուր բազումք մարդկութեան զանազան կերպարանքն ըստ դարուց դիտելով և զանազան կարողութիւնքն՝ կարևոր գիտութեամբ և խրախուսանօք ճոխանան, և իբրև քաղելով իմն և ծծելով զլաւն և զպիտանի՝ թևակոխեն 'ի ծնունդս գերաթռիչ հանճարոյ արդասեաց:...

Բայց եթէ այս թանգարանաց և հանդիսարանաց յիշատակութեամբ գորովին սիրտք մեր և կարօտագին հառաչեն, թէ ինչո՞ւ և մեր՝ որ ազգ եմք հնապանծ և անբաւ յիշատակօք մեծապանծ՝ չըկան գոնեա քանի մի թանգարան, քարող նախնեաց արուեստիցն՝ ուսմանց և պատմութեան, կրնանք քաջալերուիլ զի գոնեա կան թանգարանք վերծանութեանց, որք հաղորդեն զամենայն կարևոր ուսումն և գիտութիւն՝ արծարծ պահելով պիտանի գրեկիւք զամենայն բարոյական՝ ազգային և ուսումնական զգացումն և ծանօթութիւն 'ի խորս հոգւոց. այլ քաջալերուինք՝ կ'ըսեմ, զի գոնեա կան թանգարանք հմտութեանց՝ պարբերական թերթք ըստ զանազան ոճոյ, որք աւելի և պակաս բաշխեն և տարածեն զհին և զնոր՝ զգիտելին և զցանկալի 'ի միտս մերայնոց:

Այս դասուն կը վերաբերի նաև մեր Բազմավէպն ալ, որ անցեալ տարւոյն ընթացիւք աւարտեց իր երեսնամեայ շրջանը: Արդեօք լուսաւոր շրջան էր կատարածը. — առ այս մեզ այսչափ 'ի ճահ է ըսել թէ չծածկեց զլոյս. այլ եթէ չափաւորեց թերևս երբեմն առ 'ի չխրտորդել մտաց աչքերը, չափաւորեալ ըլլալով նաև ըստ սահմանի իւր ծրագրին, ըստ զանազան նկատմանց ժամանակին և իւր ընթերցողացը, այժմ՝ յետ երկց տասանց 'ի չորրորդն միջամուխ ըլլալուն՝ մեծագոյն պարտք և պատիւ կը համարի իրեն և ազգին՝ նորագոյն ջանիւք մտաւորական լուսոյ բիւր ցումունքն ըստ կարելոյն բազմանիւթ յողուածովք կեդրոնացընել մտաց վառարաններու վրայ. չթողլով կամ չկարենալով թողուլ 'ի բաց ըստ ամենայնի:

իւր բռնած ոճը, կը փափաքի նոր ժա-
մանակիս լուսամիտ ուսումնաթերթից
ոճոյն ալ հետևիլ իւր իւր, և իրը
լաւագոյն թանգարան կամ հանդիսա-
րան մ'ընել հին և նոր կարեւոր գիտե-
լեաց, փայլուն երևցընել ջանալով ժա-
մանակիս և անցելոյն ստոյգ բարգա-
ւաճանքը:

Պարզագոյն ըսելով՝ մեր փափաքն
ու նպատակն է ուրեմն ազգերնուս ներ-

կայ ուսումնական և կենցաղական պա-
րագայիցն և պիտոյիցն համեմատ աւե-
լի ևս նպաստամատոյց ըլլալ, նախան-
ձելի ընելով հիմնական յառաջադիմու-
թիւնն այլոց ազգաց՝ որոնք գիտեն բա-
րոյական կենաց զարգացման ամենայն
դիպագոյն և սղագոյն ոճն, և կը վա-
յելեն բարօրութիւն և փառք ՚ի ներ-
կայումս և յապագայն:

ՀԱՆԴԷՍ ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԽՕՍՔ ԵՒ ԳԻՐԻՔ*

Միտ գիր ընթերցուածոց,
փիթարութեան և վարդապե-
տութեան: (Ա. ՏԷՄ. Գ. 13.)

Եղբարք իմ,

Ձեր քրիստոնէական սիրոյն արժանաւոր
գործերը նախ քան զամենայն անոնք են՝ ո-
րոնց նիւթն է մարդուս բանականութիւնը,
սիրտը, կամքը, մէկ խօսքով՝ հոգին. և որչափ
պիտոյք հոգւոյ նախագաս են քան զպիտոյս
մարմնոյ, այնչափ ալ առաջնոյն սէրը նա-
խամեծարելի է քան զերկրորդը. և մանա-
ւանդ հիմակուան ժամանակս պէտք է որ
մէկը աշուրները կամովին լուսոյ դէմ փա-
կէ՝ որպէս զի չտեսնէ ՚ի խորս հոգւոց ե-
ղած ժամանակակից մեծամեծ թշուառու-
թիւնները: Այսու բաւական ըսած կը հա-
մարիմ եթէ գործ մը որուն գլխաւոր վախ-
ճանն է բարի գրոց տպագրութիւնն ու տա-
րածումը՝ կանխաւ և իրաւամբ ձեր սիրոյն
արժանի եղած է. զօրութեամբ բանի՝ ճշմար-
տութիւնն ու բարին տարածելը՝ գերա-
գոյն կերպիւ քրիստոնէական իր մ'ըլլալով,
և սերտ դաշնաւորեալ քրիստոնէութեան
վախճանին հետ:

Այսու արդարև քրիստոնէութիւնն իշ-
խող եղաւ մարդկութեան: Խօսեցան ա-
ռաքեալք. իրենց խօսքն ընդ ամենայն եր-

* Առաջիկայ ճառս Գաղղիոյ ներկայ ժամանա-
կիս առաջին բեմբասաց պերճախօսներէն մէկուն
Հօր Փելեքսի է, զոր խօսած է ՚ի Բարիչ Ս. Սու-
պիկիոս եկեղեցւոյն մէջ 1865ին:

կիր հնչեց. « Ընդ ամենայն երկիր ել բարբառ
նոցա », և աշխարհս այլափոխեցաւ. և ինչ
որ Եկեղեցին հիմնեց բանիւ, կը պահէ. և
կը յարատեւէ ՚ի նոյն բանիւ: Գերբնական
այսինքն է քրիստոնէական կենաց մէջ ա-
մենայնի արմատ հաւատքն է. արդ հա-
ւատքը՝ լսելէն առաջ կու գայ, և լսելը՝
խօսքէ. « Հաւատք ՚ի լսելոյ, և լուր ՚ի բանէ »:
Ուրեմն գերբնօրէն՝ փրկութիւնն ՚ի բանէ է.
այս է զարմանալի տնտեսութիւն քրիստո-
նէութեան երկրիս վրայ: Եւ ինչ որ ճշմա-
րիտ է յատկապէս ըստ գերբնական կար-
գի, ճշմարիտ է նաև ըստ սոսկ բնական
կարգի, ըստ բարոյական՝ մտաւորական և
ընկերական կարգի:

Այս ամենուրեք և միշտ բացայայտ ճշ-
մարտութիւնը՝ նոր պայծառութեամբ մը կը
փայլի մեր աչաց առջև: Չար և ապական-
արար բանից աճեցուն վնասը կը ցուցնէ
յայտնապէս՝ նոյն իսկ անոնց ալ որ մտա-
զրութիւն չեն ըներ, փրկուէտ և պահպա-
նիչ բանին ներգործութիւնը տարածելու և
աճեցընելու գերագոյն պէտքը:

Ս. Միքայէլ հրեշտակապետին գործը՝ ժա-
մանակիս այս պիտոյիցը ձեռնառու է: Եւ չէ
միայն. այլք իրեն հետ և նախ քան զինքը՝
մեր մեծեղեռն աւերածոյն դարման տանե-
լու ջանից հետամուտ են, որոնց ազգե-
ցութիւնը ոչ թէ նուազել՝ այլ կը յուսայ
առաւելուլ. ոչ է նախանձորդ, այլ օգնա-
կան: Այս է արդարև յատկադրոջմ կնիք
ճշմարիտ քրիստոնէական գործոց. կարկա-
ռել եղբայրական ձեռք մը բարւոյ ճամբուն
մէջ և փոփոխակի օգնել իրարու, իր աս-
պարէղին մէջ կենալով և դիմելով ՚ի նպա-
տակն: